սըն աղօթից քոց շնորհեաց Աստուած ներումն Տրայիանոսի. այլ վասն կռապաշտ մարդոյ մի՛ աղաչէր զԱստուած, զի այլ ոչ լսէ քեզ:

Անդրիաս սկսաւ յամի տեառն ՃԺԲ. ինքնակալեաց ամս ԻԱ: Սա եղբօրորդի էր Տրայիանոսի, բայց ոչ համեմատ նմին։ Յաւուրս սորա Հրէայքն՝ որ յետ Տիտոսի ժողովեցան յԵրուսաղէմ և դարձեալ ապստամբեցան ՚ի Հռոմայեցւոց. և սորա գնացեալ յԵրուսաղէմ՝ կոտորեաց զնոսա, և զմնացեալսն ցրուեաց ընդ ամենայն աշխարհ. և զքաղաքն սուրբ պարսպեաց, որ ի Տիտոսէ աւերեալ էր։ Եւ հրամայեաց քրիստոնէից բնակիլ անդ, և ոչ Հրէից։ Բայց զԳողգոթայն զտեղի չարչարանացն Քրիստոսի, որ յառաջ արտաքոյ քաղաքին պարտէզ էր, սա ՚ի մէջ քաղաքին էած որպէս և է այժմ. և կոչեաց զքաղաքըն յանուն իւր Հելիուսաղեմ կանուբար, քանզի և իւր անունն Հելիուս Անդրիանէ

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան